ՄԱՍ III

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ 2013 թվականի համախմբված բյուջեն կանխատեսվում է՝ եկամուտների գծով՝1,057.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1,181.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 124.0 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների 2013 թվականի բյուջեների ծավալը խիստ նախնական գնահատվել է՝ եկամուտների գծով՝ 97.5 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող հատկացումները) և ծախսերի գծով՝ 101.7 մլրդ դրամ և դեֆիցիտը՝ 4.2 մլրդ դրամ:

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 1,031.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 1,151,4 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 119.8 մլրդ դրամ:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 12.7 մլրդ դրամ նվազեցումով և 15.2 մլրդ դրամ ավելացմամբ: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2013 թվականի

ծրագրվող ՀՆԱ-ի հարաբերությունը կանխատեսվում է 2.64 %-ի չափով, 2012 թվականի համար ծրագրված և 2011 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 3.1 %-ի և 2.8%-ի դիմաց: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրվում է ներգրավել շուրջ 421.4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):